

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշխատանքը նվիրված է հայկական հնագույն ազդարարական շրջաններից մեկի՝ Զավախքի ժողովրդական պարերին: Ներկայումս Զավախքը մտնում է Վրացական ՍՍՀ կազմի մեջ:

Զավախքում ապրող հայերի հիմնական մասի բուն հայրենիքը Կարինն է՝ էրզրումը և նրա դավառը:

Ներկայացնելով հայ ժողովրդի տվյալ հատվածի՝ Զավախքի պարային ժառանգությունը, մեր նպատակն է ևղի ծանոթացնել այդ պարերին և ընդգծել նրանց տարրերություններն ու առանձնահատկությունները:

Աշխատությունը տալով Զավախք անունը շինք սահմանափակվել նրա պատմական տերիտորիայով, որովհետև 1830 թ. կառարած հայկական մեծ դաղթի հետևանքով էրզրումցիները վերաբնակություն են հաստատել Զավախքում, ապա և նրա հարևան Սամցխե (այժմ Ախալցխա) գավառում: Մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում էրզրումցիներն իրենց մեջ ձուլելով տեղական հայերին, ձեռք են բերել աղղագրապան որոշակի դեմք և առանձնահատկություններ:

* * *

Հնում որոշակի օրերի կատարվել են մասսայական պարեր, որոնց տեխնիկական դժվարությունները հարթվել են մշակական և հատուկ վարժություններով: Ժողովրդական պարերը լավ կատարելու համար վարժվել են բոլորը: Մինչև հիմա էլ, եթե որևէ մեկը վատ է պարում, նրան կանգնեցնում են պարաշարքի վերջում: Առաջներում վատ պարողին ուղղակի հեռացրել են, որոշ դեպքերում նույնիսկ պատժել: Տեղեկություններ են պահպանվել հին Հայաստանում երիտասարդու-

թյանը պարերի ուսուցման, սպորտային խաղերում վարժեցնելու մասին: Հայաստանում հատուկ ուշադրություն են դարձրել պատանիների ֆիզիկական դաստիարակության, ուժի ու ճտրպկության մրցության վրա: Այդ մասին վկայում են մինչև վերջերս ժողովրդապան տներին անցկացվող երգերը, դրժիքային երաժշտությունը, պարերը, խաղերը, մրցումները, ձեռնամարտերը, բռնցքամարտերն ու թատերական գործողությունները:

Հին ժամանակների հասպացողությամբ վեպերն ու առասպելներն իրենց մեջ ընդգրկել են ժողովրդի, նրա նախնիների ու հերոսների գործերը: Վեպերն ու առասպելները երգվում ու ներկայացվում էին պարային ու մնջախաղային համապատասխան շարժումներով: Պարերդերի տեքստերում պատմվում էին առասպելական, պատմական դեպքերը, գործող անձանց վարքագիծը, նկարագրվում էր նրանց գործունեությունն ու սխրանքները: Բացի առանձին, դրժող անձանց գերակաարներից, յուրահատուկ դերակատար էր ինքը ժողովուրդը, որը «պատմական» դեպքերի հիմնակտն նկարագրողն ու արահայտողն էր: Առանձին գործող անձինք ներկայացնում էին կենդանական, մարդկային ու երևակայական կերպարներ: Պարող է, որ շարժումները, գործող անձանց ու խմբերի ռասավորումները պետք է նախօրոք փորձվեին: Շատ պարեր, խաղեր ու մրցումներ ունեցել են հմայական զորություն և ֆիզիկական դաստիարակության նշանակություն: Դրա համար ընտրված հատուկ անձնավորությունների ղեկավարությամբ պատանիներին ու աղջիկներին նախ ծանոթացրել են տեղական հոգեոր մշակույթին, ապա սովորեցրել պարերն ու թատերական գործողությունները: Նրանց սովորեցրել են նաև պաշտամունքային ու առօրյա իրերի, կերպարանափոխության միջոցների (ղզեստների դիմակների, դիսի հարգարանքի և

1 Նույն է կուբայիների մոտ, E. M. Шуллинз, Кубачинцы и их культура, «Труды Института этнографии», VIII, М.—Л., 1947, էջ 152:

այլնի) գործածությունն ու պատրաստումը: Պատանիների ռազմական դաստիարակության հարցում կարևոր նշանակություն է տրվել մրցումներին ու ռազմական պարերին: Յուրաքանչյուր համայնք, ցեղ, ավելի ուշ՝ ժողովուրդ հետևել ու հոգ է տարել աճող սերնդի, համայնքի ապագա երկունե անդամների դաստիարանման մասին՝ հաղորդելով իրեն հայտնի գիտելիքները՝ կապված տեղական հոգևոր ու նյութական մշակույթի

հետ: Նախապատմական ժամանակներում այդ սմենն արվում էր նվիրատվական ծեսերի՝ ինիցիացիաների միջոցով, որոնք անց էին կացվում սեռա-աարիքային կազմափոխությունների ղեկավարությամբ: Հետագայում այդ իրավունքը փոխանցվել է հասակակիցների վերակազմավորված միություններին, որոնք իրենց որոշ իրավունքներն ու լպարտականությունները սլահույանել են մինչև մեր օրերը: